

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

04.08.2014թ. ԿՆՔՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ՝ 7377 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

«02» սեպտեմբերի երկու հազար տասնինը թվականի

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցեն՝ 0091, ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 43, պետական գրանցման վկայական՝ սերիա 01Ա, N039934, տրված՝ 07.01.1998թ., գրանցման N264.120.04128, գրանցման ժամանակը՝ 30.12.1997թ.), այսուհետ՝ Վաճառող, ի դեմս Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն Հ. Թաղևադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա և որի անունից 30.08.2019թ. տրված N01-20/3887 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ՆԱՐԵ ԱԼԻԿԻ ՔԱՐԱՄՅԱՆԸ, (ծնված՝ 08/05/1988թ., նույնականացման քարտ՝ 010382661, տրված՝ 004-ի կողմից, 18/03/2019թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ՄԱՍԻԿՈՆՑԱՆՑ Փ., 40/1 Շ, 13ԲՆ.), մի կողմից և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը (իրավաբանական հասցե՝ 0044, ՀՀ, ք. Երևան, Բազրևանդի 5), այսուհետ՝ Գնորդ, ի դեմս Պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանի, որի անունից երկու հազար տասնինը թվականի օգոստոսի տասնչորսին տրված ՊՆ/510Ադ-862 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ԱՐՇԻԿ ԼԵՎՈՆԻ ՇԼԵՊՅԱՆԸ, (ծնված՝ 19/08/1975թ., նույնականացման քարտ՝ 008228058, տրված՝ 012-ի կողմից, 20/09/2017թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱԶՍՓՆՑԱԿ, Ա. ՄԱՐԳՍՅԱՆ Փ., 6 Շ, 9ԲՆ.), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.07.2019թ. N851-Ն որոշմամբ, այսուհետ՝ Որոշում, կնքեցին միմյանց միջև 2014 թվականի օգոստոսի 4-ին կնքված Անշարժ գույքի առուվաճառքի 7377 պայմանագրի, այսուհետ՝ Պայմանագիր, սույն համաձայնագիրը, այսուհետ՝ Համաձայնագիր, հետևյալի մասին.

1. Պայմանագրի 3.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.2. Գնորդը պարտավորվում է Պայմանագրի գնից 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամը վճարել մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ Պայմանագրի գնի չվճարված մասը՝ 33 352 720,36 (երեսուներեք միլիոն երեք հարյուր հիսուներկու հազար յոթ հարյուր քսան դրամ երեսունվեց տոն)՝ ՀՀ դրամ գումարը, Վաճառողին վճարել մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:»:

2. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման, նոտարական վավերացման և դրանից ծագող իրավունքների պետական գրանցման պահից:

3. Համաձայնագիրը կազմված և ստորագրված է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:



Վաճառող
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Գնորդ
Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարություն

Լիազորված անձ

Լիազորված անձ

[Handwritten signature]

[Handwritten signature]



ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆԻՆԸ ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԵՐԿՈՒՄԻՆ

սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ Հայաստանի Հանրապետության ԵՐԵՎԱՆ Նոտարական տարածքի Նոտար ԷԼՄԻՐԱ ԳԵՎՈՐԳԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՍ կողմից:
Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ:
Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ՝ 10916 ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար

Էմիլրա Գևորգի Դանիելյան



ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՋԻ ԱՌՈՒՎԱԾՆՈՋԻ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան

«ՕԿ» օգոստոսի երկու հազար տասնչորս թվականի

«Գազպրոմ Արմենիա», փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցե 0091, ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 43, պետական գրանցման վկայական սերիա 01Ա, N 039934, տրված 07.01.1998թ., գրանցման N 264.120.04128, գրանցման ժամանակը՝ 30.12.1997թ.), այսուհետ՝ Վաճառող, ի դեմս Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն Վարդան Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, և որի անունից երկու հազար տասնչորս թվականի հուլիսի երեսունմեկին տրված N 01-16/3021 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Նարե Ալիկի Քարանյանը (նույնականացման քարտ՝ 000426296, տրված 29.10.2013թ. 004-ի կողմից, հաշվառված ք. Երևան, Մամիկոնյանց 41-50), մի կողմից, և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, այսուհետ՝ Գնորդ, ի դեմս նախարար Ս. Օհանյանի, որի անունից երկու հազար տասնչորս թվականի օգոստոսի երկուսին տրված N ՊՆ/510-1303 լիազորագրի հիման վրա սույն պայմանագիրը նոտարական վավերացման է ներկայացնում ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և գործերի բնակավորման վարչության ՋԲ բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Նորայրի Ստեփանյանը (անձնագիր՝ AH 0627375, տրված 16.07.2008թ., 004-ի կողմից, հաշվառված ք.Երևան, Կասյան փողոց, 1 շենք, բն. 32), մյուս կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌՈՒՎԱԾ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը, որպես սեփականություն, ձեռք է բերում ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, Աղայան 12 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ Հողամասի տվյալները - Կադաստրային համարը՝ 11-001-0087-0023, Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, Օգտագործման նպատակը՝ հասարակական կառուցապատման, Հողամասի չափը (հա)՝ 0.13, Իրավունքի տեսակը՝ սեփականություն, Շենքի տվյալները - Կադաստրային համարը՝ 11-001-0087-0023-001, Նպատակային նշանակությունը՝ հասարակական, Սակերեսը (քառ.մ.)՝ 445.5, Իրավունքի տեսակը՝ սեփականություն, այսուհետ՝ Գույք:

1.2. Գույքը պատկանում է Վաճառողին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N19062014-11-0002 վկայականով՝ տրված՝ 19.06.2014թ. ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից:

1.3. Գույքը Գնորդին պետք է հանձնվի Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից եռօրյա ժամկետում: Գույքը Վաճառողի կողմից հանձնելը և Գնորդի կողմից դրա ընդունելն իրականացվում է Կողմերի ներկայացուցիչների կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտով:

1.4. Վաճառողը երաշխավորում է, որ Պայմանագրի 1.1. կետում նշված Գույքը վաճառված, գրավ դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից երկու հազար տասնչորս թվականի հունիսի տասնիննին տրված Անշարժ գույքի է. դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ N JS-19062014-11-0004 միասնական տեղեկանքով:

1.5. Վաճառողը հավաստիացնում է Գնորդին, որ Գույքի մասով Պայմանագրի կնքման պահին «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չմարված պարտավորություն առկա չէ:

1.6. Վաճառողը պատասխանատու է մինչև սույն Գույքի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքի փոխանցման օրը Գույքի հետ կապված հաշվեգրված գործունակ վճարների, ներդրյալ աղբահանության վճարը, իր հաշվին համապատասխան մարմիններին ու կազմակերպություններին վճարելու համար: Այն դեպքերում, երբ



Գույքի համար, մինչև Վաճառողի սեփականության իրավունքը, դադարման պահը հաշվեգրված պարտքի գծով գանձող մարմինները «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով վճարային պահանջ են ներկայացնում Գնորդին, ապա Գնորդն իրավունք ունի իր վճարած աղբահանության վճարի գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գնի վճարման չափից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վաճառողն իրավունք ունի՝

2.1.1. եթե Գնորդը Պայմանագրի 3-րդ բաժնում նշված ժամկետում չի վճարել Գույքի համար, իր հայեցողությամբ՝ պահանջել վճարելու դրա համար կամ հրաժարվել կատարելու սույն Պայմանագիրը,

2.1.2. եթե Գնորդը Պայմանագրի խախտմամբ ավելի քան 60 օր հրաժարվում է Գույքն ընդունելուց՝ իր ընտրությամբ պահանջել ընդունելու այն կամ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց:

2.2. Վաճառողը պարտավորվում է՝

2.2.1. Պայմանագրի նոտարական վավերացումից հետո՝ Պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում Գնորդին հանձնել Գույքը՝ կազմելով համապատասխան հանձնման-ընդունման ակտ,

2.2.2. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Գույք,

2.2.3. մինչև Պայմանագրի կատարումը ծագած հիմքերով երրորդ անձանց կողմից Գույքն առգրավելու դեպքում հատուցել Գնորդի վնասները:

2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1. հրաժարվել Պայմանագրից, եթե՝

2.3.1.1. Վաճառողը հրաժարվում է հանձնել Գույքը,

2.3.1.2. Վաճառողը հանձնել է Պայմանագրի առարկայում նշված Գույքին չհամապատասխանող Գույք,

2.3.2. Գույքը տրամադրել երրորդ անձանց՝ վարձակալության և/կամ անհատույց օգտագործման իրավունքով, առանց Վաճառողի նախնական կամ հետագա համաձայնության,

2.3.3. քանի որ Պայմանագրի գինը լրիվ չի վճարվում Պայմանագրի կնքման պահին, Վաճառողի հետ համաձայնեցված Գույքն օտարել երրորդ անձի, որպիսի համաձայնության տրամադրումը չի կարող մերժվել Վաճառողի կողմից, եթե օտարման գործարքի պայմանների համաձայն Գույքի ձեռքբերողին կփոխանցվի (պարտքի փոխանցում) Վաճառողի հանդեպ Պայմանագրի գնի վճարման Գնորդի չկատարված վճարային պարտավորության համապատասխան մասը,

2.3.4. քանի որ Պայմանագրի գինը լրիվ չի վճարվում, Գնորդն իրավունք ունի Գույքը լրիվ կամ մասնակի գրավադրել երրորդ անձանց մոտ բացառապես Վաճառողի համաձայնությամբ, որպիսի համաձայնության տրամադրումը չի կարող մերժվել, եթե գրավադրմամբ Գնորդի կողմից ներգրավվող միջոցները նախատեսված են Վաճառողին Պայմանագրի գնի վճարումների կատարման համար:

2.4. Գնորդը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում Գույքն ընդունել Վաճառողից,

2.4.2. վճարել Գույքի արժեքը Պայմանագրով նախատեսված կարգով, ժամկետում և գումարի չափով,

2.4.3. Ապահովել Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում,

2.4.4. կատարել Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Գույքի վաճառքի ընդհանուր գինը, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, կազմում է 36352720.36 (երեսունվեց միլիոն երեք հարյուր ութսուներկու հազար յոթ հարյուր քսան դրամ երեսունվեց լումա) դրամ ներառելով գրառելի հարկերը, եթե Վաճառողի կողմից իրացումը հանդիսանա հարկման օբյեկտ:

3.2. Գնորդը պարտավորվում է Պայմանագրի գնրոց 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամը վճարել մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ Պայմանագրի գնի չվճարված մասը՝ 33352720.36 (երեսուներեք միլիոն երեք հարյուր հիսուներկու հազար լոթ հարյուր քսան դրամ երեսուվեց լումա) ՀՀ դրամ գումարը Վաճառողին վճարել Պայմանագրի կնքման պահից 12 ամսվա ընթացքում:

3.3. Գնորդն իրավունք ունի կատարել վաղաժամկետ վճարումներ և Վաճառողը պարտավորվում է ընդունել այդ վճարումները:

4. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈՒՆԱՆՑՈՒՄԸ

Գույքի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքը ծագում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում այդ իրավունքի պետական գրանցման պահից:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

6.1. Կողմերը համաձայնվում են, որ Գույքի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքի գրանցման պահից ի վեր Վաճառողը դրա նկատմամբ գրավի իրավունք չունի, սակայն Գույքի տնօրինման հարցում Պայմանագրի 2.3.3. և 2.3.4. կետերով նախատեսված սահմանափակումները ենթակա են կիրառելի հաշվառման կամ գրանցման Գույքին վերաբերող կադաստրային գործում որպես Պայմանագրի հիմքով Վաճառողի օգտին կիրառված սահմանափակումներ մինչև Պայմանագրի գնի լրիվ վճարման պահը գործողության ժամկետով:

7. ԱՆՅԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)


7.1. Պայմանագրով ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դրանց չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք են Պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի ազդեցության, այսինքն՝ Կողմերի կամքից անկախ տեղի ունեցած արտակարգ դեպքերի և (կամ) ստեղծված իրավիճակների, որոնք Կողմերը չէին կարող կանխատեսել և նախակամիսել, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով)՝ բնական աղետները, պատերազմները, ապստամբությունները, հասարակական անկարգությունները, գործադուլները, պետական մարմինների իրավական ակտերը և այլն, որոնք խոչընդոտում են Կողմերի բնականոն գործունեությանը և հանգեցնում են նրանց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հակառակ նրանց գործադրած ջանքերի՝ խուսափելու կամ վերացնելու անհաղթահարելի ուժի ազդեցությունը:

7.2. Կողմերը պարտավոր են անհաղթահարելի ուժի առաջացման և ավարտի մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրա և դրա հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

7.3. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս կողմին:

8. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող որավունքները՝ պետական գրանցման, Պայմանագրի նոտարական վավերացման օրվա մեկից սկսած՝ 30 (երեսուց) օրվա տարածքային օրվա ընթացքում:



8.2. Պայմանագրի նոտարական վավերացման ուստի կապված է կատարում է վաճառողը, իսկ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը՝ գնորդը:

8.3. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և նոտարական վավերացման պահից ու դադարում է պարտավորությունների պատշաճ կատարմամբ:

9.2. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.3. Պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:


9.4. Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող չորս օրինակներից, մեկական օրինակ՝ Կողմերի, նոտարական գրասենյակի և ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման համար:

10. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Վաճառող

«Գազպրոմ Արմենիա» ՍՊԸ
0091, ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 43
«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ
ԽՈՒՄԲ» ՓԲԸ
Հ/Հ 23800 03097950500
ՀՎՀՀ 00046317

Վարչության նախագահ –
Գլխավոր տնօրեն




Գնորդ

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարար

Վ. Հարությունյան  Ս. Օհանյան



ԵՐԿՈՒ ՀԱՁԱՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆՈՐԴԻ ԴԱՆԻԵՍՅԱՆԻՍ ԿՈՂՄԻՑ:

սույն պայմանագիրը վավերացված է իմ կենտրոն տարածքի նոտար էլեկտրոնային գրասենյակի կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև (իրավաբանական անձի) իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 567 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում: Գանձված է պետական տուրք: Զինամշանի պատկերով կնիք

